


- k. R. K.

fur 5 hours - hr  
single



photchu 1917 p

30 MAY 2006

ՀԱՅ ՅԵՆ ԿԱԾԵԱՑԻՈՒԹԻ

Գրադարան «Աշխատաւոր»-ի № 8.

1426

Հ. Բ. Բ. Հ.



ԻՆ Է  
ՀԵՄՆԱԴԻԲ  
ՓՈՂՈՎԸ

Թուս, թարգ. օր. 1. Յաբութիւննան

1426

Թիֆլիս

Տպարան «Աշխատաւոր»

1917

02 MAY 2013

2814

9(47)  
L-50

## ԻՆՉ Է ՀԻՄՆԱԳԻՐ ԺՈՂՈՎԸ

Լիքին

Այս բողէից, երբ յեզափոխական  
ըանակը և բանւորները խորտակեցին  
հին միահեծան, բռնապետական կար-  
գը և թագ սւորին դահընկեց արին,  
Ռուսաստանում հարց ծագեց՝ ինչպէս  
ոռուսները կկարգաւորեն մեր ապագայ  
պետական կեանքը և ով պէտք է հա-  
գայ այդ:

Կեանքը ինքը պատասխանում է  
դրան:

Ինչու էր մինչև հիմա ոռուս ժողովուր-  
դը գֆւար, ծանր կացութեան մէջ ապ-  
րում, ինչու Ռուսաստանում կեանքը  
լի էր ցաւերով, արցունքներով, թշ-  
ւառութիւններով, անարդարութիւն-  
ներով, բանութեամբ ու կեղեգումներով:

1426



343 - 2001

Այդ նրանից էր առաջ գալիս, որ  
ժողովուրդը ինքը չէր կառավարում  
երկիրը և ոչ էլ ինքն իր համար օ-  
րէնքներ հրատարակում: Նրա համար  
օրէնքներ հրատարակում էին ուրիշ  
ները, որոնց ձեռքին էր իշխանութիւ-  
նը:

Իսկ իշխանութիւն ունեցողն երն  
այնպիսի օրէնք էին տալիս, որ իրենց  
համար ձեռնտու լինեն և ոչ թէ ժողո-  
վրդի: Նրանք իրենց մասին էին մտա-  
ծում և ոչ թէ ժողովրդի:

Հետեապէս եթէ ժողովուրդը կամե-  
նում է բարելսւել իր կեանքը՝ նա  
պէտք է իշխանութիւնը իր ձեռքը վերց-  
նի, ինքը պէտք է մշակէ օրէնքները,  
որոնցով երկիրը պէտք է առաջնորդւի,  
կառավարւի: Իմանալու համար՝ թէ  
ժողովուրդը որ օրէնքներն է իր համար  
ամենալաւը համարում—երկու ճանա-  
պահն կայ:

1-ին ճանապարհը.—Կարելի էր մէկ

մէկ հարցնել երկրի չափահաներին:  
Այս ձեզ, (որ կոչում է պլեքիսցիտ  
կամ ըեֆերենոլում) գոյութիւն ունի  
Զւլցէրիայում մի քանի պետական  
հարցերի վերաբերմամբ:

2-րդ ճանապարհը.—Կարելի է ամ-  
բողջ երկրից հաւաքել պատգամաւոր-  
ներ, ենթադրենք ամեն 10,000 չափա-  
հաս քաղաքացիներից և քաղաքացունի-  
ներից 1 պատգամաւոր և յանձնարա-  
բել այս վստահեալ մարդկանց՝ մշակել  
այն հիմնական օրէնքները, որոնցով  
պէտք է ապագայում ապրի և կառա-  
վարւի Ռուսաստանը: 1-ին ձեզ շատ  
բարդ է, ուստի աւելի յարմար է 2-րդի  
վրայ կանգ առնել, այսինքն թողնել  
ժողովրդի պատգամաւորների ժողովին,  
ժողովրդի լիազօրներին՝ հիմնել նոր  
կարգ, ասել է թէ՝ հաւաքել չիմնադիր  
ժողովը:

Իրօք, ինչ պայմաններում չիմնադիր

Ժողովը ամբողջ ժողովուրդի կամքը  
կարտայայտի:

Միայն այն ժամանակ, եթէ Հիմնա-  
դիր Ժողովի պատգամաւորները ըն-  
տըւեն երկրի ըոլոր չափահաս ազգա-  
րնակութեան կողմից՝ առանց ուսուի,  
կրօնի, ազգի և դասակարգի խտրու-  
թեան՝ ոկտած 20 տարեկանից, այսին-  
քըն երբ պատգամաւոր ընտրելու ի-  
րաւունքը կլինի ընդհանուր:

Սակայն այս բաւական չէ: Որպէսզի  
Հիմնադիր Ժողովը խսկապէս ամբողջ  
ժողովրդի կամքի արտայայտիչը լինի,  
անհրաժեշտ է, որ ձայնատւութիւնը՝  
պատգամաւորներ ընտրելիս՝ լինի հա-  
ւասար, ուղղակի և գաղտնի:

Հաւասար ձայնատւութիւն նշանա-  
կում է, որ ամեն մի չափահաս քա-  
ղաքացու—կնօջը թէ տղամարդուն,  
տրում է մի ծայն. բայց մի քանի  
երկրներում թէպէտ և ամբողջ չափա-  
հաս ազգարնակութիւնը մանակցում

է ընտրութիւններին, սակայն նրանց  
ձայնները միահաւասար չեն, օր.՝ Ան-  
դիայում, ովքեր ունան կարածներ—  
հող կամ գործարաններ, կամ էլ տներ  
—տարբեր տեղերում, նրանք իրաւունքը  
ունին ձայն տալու պատգամաւորնե-  
րին այդ բոլոր տեղերում, թէկուզ  
նրանք 100 տեղ էլ կալւածներ ունե-  
նան: Բեղդիայում նրանք, ովքեր չու-  
նեն սեփականութիւն, ինչպէս բանւոր-  
ները կամ մանր սեփականութիւն ու-  
նեցողները, ինչպէս զիւղացիները, մի-  
այն մի ձայն ունեն, իսկ աւելի հա-  
րուստ մարդիկ իրենց հարստութեան  
կամ ընտանեկան դրութեան համեմատ  
ունեն 2—3 ձայն:

Այսպիսով Հիմնադիր Ժողով կարող  
էին մտնել կապիտալիստներն ու հո-  
ղատէրները և ժողովրդական մասսանե-  
րի թշնամիները, այն պատճառով մի-  
այն, որ կապիտալիստներից և հողա-  
տէրներից ամեն մէկը օգտւում է շատ

ձայներից, իսկ բանւորներն ու գիւղացիները ունեն միայն մի-մի ձայն:

Ահա թէ ինչու ամեն մի ընտրող միայն մը ձայն պէտք է ունենայ: Անգլիայում ժողովուրդը վերջին ժամանակներս պայքարում է դրա համար, պահանջում է, որ ամեն «մի մարդ ունենայ մի ձայն»:

Ուղղակի ձայնատութիւն նշանակում է, որ ամեն մի չափահաս քաղաքցի ուղղակի տալիս է այն մարդու անունը, որին ինքը վստահանում է, ինչպէս հաւատարիմ պաշտպանի իր իրաւունքների, իր շահերի: Հետևապես նա գիտէ, թէ ումն է ուղարկում իր իրաւունքները պաշտպանելու:

Ժողովրդական իրաւունքների սահմանափակման համար լինում են, այսպէս ասած, երկաստիճան, եռաստիճան և մինչեւ անգամ բազմաստիճան ընտրութիւններ, այսպէս օր՝ ոռու գիւղացիները Պետական Դումայի համար

չէին ընտրում իրենց հաւատարիմ մարդուն, այլ գիւղական ժողովում ամեն 10 տուն ընտրում էր մի մարդու շըրջանային կենտրոնն ուղարկելու համար: Նրանք էլ հաւաքւում էին, ընտրում առանձին պատվիրակներ, սրանք էլ կրկին պատւիրակներ էին ընտրում: Եւ ահա այս վերջիններն արդէն ընտրում էին պատգամաւոր (գեպուտատ):

Այսպիսի կարգերում գիւղացին հաստատ չէ իմանում, թէ ով կօգտուի իր ձայնից, իսկ պատվիրակների ամեն մի հետեւալ ժողով դառնում է աւելի ու աւելի սակաւաթիւսրանց վրայ հեշտ է ճնշում գործ զնել, հեշտ է դիմել կաշառքի. մի խօսք՝ հեշտ է ընտրել պատգամաւոր այն մարդուն, որը ժողովրդի և նրա երջանկութեան հետ գործ չունի:

Այդ պատճառով ժողովրդի համար կարևոր է, որ ընտրութիւնները լինեն ուղղակի, որպէսզի ամեն մէկը գիւղեւողակի:

նայ, թէ ուժն է ինքը պատգամաւոր ուզարկում:

Դաղտնի ձայնատւութիւն նշանակում է այն, որ ամեն մէկը տումսակով ձայն է տալիս այն մարդուն, որին կամենում է պատգամաւոր ընտրել: Տոմսակի վրայ զբած է լինում այն մարդու անունը, որին նա ուզում է ընտրել: Տոմսակը դնում է ծրաբի մէջ և զցում ուղկղի մէջ:

Այս ձեռվ ոչ ոք չի կարող իմանոլ, թէ ով ուժն է ձայն տալիս և դա հընարաւորութիւն է տալիս տեսն մէկին ազատ, իր խղճին լսելով: Ընտրել պատգամաւոր: Հակառակ դէպօւմ, այսինքն եթէ ընտրութիւնները լինեն բաց և ոչ թէ զաղտնի ձայնատւութեամբ, կախումն ունեցողները, ինչպէս բանւորն երը, գործակատարները, գիւղացիները, մանը աստիճանաւորները (չինովնի՛), առհասարակ լինզագութեամբ մարդիկ հսարաւորութիւն չեն

ունենայ ձայն տալու նըանց, ով իրենց համար հաճելի է, վախենալով, որ նըրանք, որոնցից իրենք կախումն ունեն—խաղէինները, տէրերը կարող են վրէժ առնել իրենցից, իրենց զրկել հացից, ամեն տեսակ տհաճութիւններ պատճառել, ենթարկել ամեն տեսակ հալածանքների:

Հարուստները, ազգեցիկները, որոնց համար ցանկալի է, որ ժողովուրդը որէնսդիր իշխանութիւնից հեռու մնայ, շատ լաւ հասկա ում են: Թէ որքան ձեռնտու է իրենց, որ պատգամաւորները բաց ձայն տան, ինչպէս անում են Պրուսիայում, և միշտ պահանջում են այդ, կեղծաւորաբար լայտարաբելով, որ քաղաքացինները քաջութիւն պէտք է ունենան բաց ու աղատ արտայատել՝ թէ ումն են իրենք վստահանում:

Սակայն ինչ ձեռնտու է ժողովուրդի թշնամիններին՝ այդ ձեռնտու չէ ժողո-

վուրդին, գրա համար պէտք է պահաջել  
գաղտնի ձայնատւութիւն:

Եւ այսպէս, որպէսզի ժողովուրդը  
կարողանայ ապահովել իրեն ամեն մի  
ճնշումից, ապագայում ծառայ լինելուց,  
որպէսզի վարջապէս նա լինի իր հողի  
տէրը, որ ինքը հազար տարի ջրել է  
իր քրածինքով և արիւնով, նա ինքը  
պէտք է հիմնի ապագայ կեանքի հիմ-  
քերը, այնպէս որ էլ երրէք բաց չթող-  
նի իր ձեռքից իշխանութիւնը. միայն  
այդ ժամանակ ժողովուրդը կունենաց  
արդար, ամբողջ ժողովուրդի համար  
օգտակար օրէնքներ: Իսկ գրա համար  
հարկաւոր է Հիմնադիր Ժողով գու-  
մարել, որը պէտք է բաղկացած լինի  
ժողովուրդի ներկայացուցիչներից՝ ըն-  
տրած ընդհանուր, ուղղակի, նաև ա-  
սար եւ զաղտնի ծայնատութեամբ:

Եթէ ընտրութիւնները այս ձեռվ լի-  
նեն՝ Հիմնադիր ժողովում ամենից  
շատ պատգամաւորներ կլինեն գիւղա-

ցիներից և բանւորներից, որովհետեւ  
նուսաստանում գիւղացիներն ու բան-  
ւորները աւելի շատ են և նրանք,  
իհարկէ, կմշակեն այնպիսի հիմնական  
օրէնքներ, որոնք օգտաւէտ կլինեն  
ամբողջ ժողովուրդից, ողջ երկրի հա-  
մար բարիք կլինեն:

X

Ժողովուրդը պէտք է լաւ հասկա-  
նայ այս, պէտք է հասկանայ, ինչպէս  
այդ հասկանում են հարուստներն ու  
մեծամեծները, որ ում ձեռքին որ իշ-  
խանութիւնն է, նա և բարօր կեանք  
է վարում, նա և օգտաւում է դրանից,  
որպէսզի հրատարակի իր համար, բայց  
ոչ ժողովուրդի համար օգտակար օ-  
րէնքներ:

Իզուր չէ, որ հարուստներն ու մե-  
ծամեծները աշխատում են իշխանու-  
թիւնը իրենց ձեռքում պահել և ժողո-  
վուրդին մօտ շն թողնում: Իզուր չէ, որ  
բոլոր պետութիւնների ժողովուրդները  
երկար և յամառ կուր էին մղում օրէն-

սղիր գործունէսւթեանը մասնակցելու  
իրաւունքի համար ժողովուրդները  
սկսեցին հետպհետէ դիտակցել, որ ով  
իշխանութիւն և իրաւունք ունի օրէնք-  
ներ հրատարակելու, նաև և հնարաւո-  
րութիւն ունի իր ձեռքը ձգելու երկրի  
հարստութիւնները, ամբողջ հողը և  
ստիպելու ուրիշներին աշխատել եր  
օգտի, իր շահի համար:

Ում ձեռքին ևն հողերը, լճերը, հողի  
մէջ թաղւած հարստութիւնները — քա-  
րածուխը, հանքերը, նաւթը: Ում ձեռ-  
քին ևն արհեստանոցները գործարան-  
ները:

Հարուստների և մեծամեծների ձեռ-  
քին, նրանց ձեռքին, ովքեր օրէնքներ  
տալու իշխանութիւն ունին, և գրանք  
այնպիսի օրէնքներ են տալիս, որ ա-  
պահովեն իրենց բոլոր յափշտակած  
հարստութիւնները և ժողովրդին պա-  
հեն հպատակութեան մէջ:

Իսա երբ ժողովրդական մասսաները

սկսում են իրենց համար իրաւունքներ  
պահանջել, հարուստները ստիպւած  
նրանց զիջում են և զիմում զանազան  
հնարքների — խորտմանկութիւնների,  
որպէսզի մի կերպ ժողովրդի շատ չըն-  
չին մասին թողնեն օրէնսդրութեան  
գործին մասնակցելու:

Այսպէս, օրինակ, Աւստրալիայում,  
երբ ժողովրդին պէտք է իրաւունքներ  
տային և ժողովրդին թոյլ տային ընտ-  
րութիւններին մասնակցելու, ընտրե-  
լու իրաւունք տեխն բոլորին, կարծես  
ընդհանուր ընտրական իրաւունք էին  
մտցրել, սակայն ամբողջ ժողովուրդը  
բաժանեցին դասերի՝ աղնուականների,  
վաճառականների, մեշչանների և զիւ-  
զացիների: Ազնւականները պէտք է ընտ-  
րէին 85 պատգամաւոր, վաճառական-  
ները — 40, մեշչանները — 100, իսկ զիւ-  
զացիք — 170, իսկ ղբանից անա թէ ինչ  
ստացեց, ազնւականներն ու վաճա-  
ռականները քիչ են և նրանցից իրա-

քանչիւր 30—40 հոգին ընտրում է 1 պատգամաւոր, իսկ աշխատաւորներից, որոնք շատ են, 30,000 մարդը ընտրում է 1 պատգամաւոր, այսպիսով հարուստի ձայնը 1000 անգամ աւել նշանակութիւն ունի, քան բանւորի կամ դիւռացու ձայնը. նշանակում է, որ ընտրութիւնները ընդհանուր են, բայց ոչ հաւասար, և ժողովրդին այս խորամանկութեամբ խարել են:

Յետոյ դիտմամբ ընտրութիւնները նշանակում են լի օրերին, երբ ժաղովուրդի բոլոր աշխատաւոր մարդիկ զբաղւած են գործով. եթէ աշխատանքի չգնան՝ նրանք աշխատավարձ չեն ստանայ, ուրեմն ապրել չեն կարող: Ի հարկէ ընտրութիւններին քիչ ժողովուրդ է գալիս, իսկ կառավարողներին՝ հարուստներին և մեծամեծներին այդ էլ պէտք է,—ինչքան քիչ բան: որսեր և գիւղացիներ, այնքան շատ կլինեն հարուստները, այնքան շատ իշ-

խանութիւն կունենան, որ հրամայեն:

Ընտրութիւնները պէտք է կայանան տօներին կամ կիրակի օրերը. այդ ժամանակ իրօք նրանք կլինեն ընդհանուր:

Դիմում են և ուրիշ խորամանկութիւնների. ընտրութիւնների համար երկիրը բաժանում են շրջանների, ամեն մի շրջանի մայդիկ, բոլորը պէտք է հաւաքւեն մէկ կամ երկու նշանակուած տեղերը, և ահա, որպէսզի ժողովուրդի մարդիկ քիչ գան ընտրութիւններին, նրանք ընտրական շրջանները այնքան մեծ են անում, օրինակ՝ 100 մերստ, որ ժողովուրդի համար ճանապարհը հեռու լինի, և նա հրաժարւի ընտրութիւններին մասնակցելուց:

Կամ թէ կարգակրում էին, որ ընտրւած պատգամաւորները երկրին ձրի ծառայեն: Աղքատ մարդք, որ իր ամենօրեայ աշխատանքով է միայն ապրում, չի կարող ուրեմն պատգամաւոր

ձեռք-ձեռքի տւած պայքարեն ժողովուրդի ազատութեան համար: Նըրանք չպէտք է մոռանան, որ առանց ազատութեան, առանց ժողովուրդի իշխանութեան, ժողովուրդը հողը ձեռք ձգնլ չի կարող. — չի կարելի այնպիսի օրէնք հրատարակել, որ ամբողջ հողը տրի ամբողջ աշխատաւոր ժողովուրդին, այդ բոյորը հնարաւոր չի լինի, եթէ ժողովուրդը իր ձեռքը չի ձգի օրէնքներ հրատարակելու իշխանութիւնը:

Դրա համար իմացէք, որ աշխատաւորների բարեկամ ներընրանք են, ովքեր պահանջում են ժողովրդական Հիմնադիր ժողով, ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի ձայնատւութիւն, ժողովրդական Հասարակագետութիւն, Ազատութիւն ժողովրդին և այնպիսի օրէնք, որ ամբողջ հողը պատկանի ամբողջ աշխատաւոր ժողովրդին, ովքեր պահանջում են՝

«Հող եւ Ազատութիւն»:

### Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Գրադարան «Աշխատաւոր»-ի

ՀՈՅՍ ՏԵՍԱԿ № 7.

Ա. Խիմիկ Լիբրելիս

ԱՄՐԴԵՐԸ ԵՒ ՃԱՆՃԵՐԸ

Թարգմանուս. տիկ. Ա. Չուախեան  
գինն է 10 կոպ.

ՀՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ «Աշխատաւոր»-ի գրադարանի գրքոյները

- Ե. Բըրեշկօ-Բըրեշկովսկայա. — Ինչպէտք է անել Հիմնադ. ժող. 5 կ.
- Ե. Ա. Ռուբակին. — Հողի սեփականութիւնը և համայնական սեփականութիւնը. 10 կոպ.

3. Վ. Խորէնի. — Ինչէ սոցիալիզմը.  
գինն է 15 կոպ.
4. Ժ. Ժորէս — Խաղաղութեան գա-  
ղափառը. գինն է 10 կոպ.
5. Մեր ծրագիրը — Հայ Յ. Դաշնակ-  
ցովթեան ծրագրի պարզ բացա  
տրութիւնը) — գինն է 20 կ.
6. Կարմելիկ. — Եոր լերան քարոզը.  
թարգ. Տ. Յ. — 10 կ.

**Դիմել՝** Тифлисъ, редакція «Ашхата-  
воръ», Гановская ул. № 3.

Հ. Յեղ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

# ԱՇՆԱԿՑՈՒԹ

Դիմացիական եւ բանորական  
օրաթերթ

**Խմբագրութեան հասցէն՝** Тифлисъ,  
Гановская ул., № 3, редакція  
«Ашхатаворъ».

ԱՐԴՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.

9(47)  
L - 50

ՀՀ Ազգային գրադարան



NL0415172

U.